51-ՐԴ ՆԻՍՏ

26 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 7-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, խնամատարության, լուսավորության, իրավարարության և ֆինանսների մինիստրներն ու պետական կոնտրոլյորը:

Վ. Տեր-Թորոսյան - Զեկուցում է՝ Ա. Նոր գրաված գավառներում գանձարաններ և հարկային տեսչություններ հիմնելու օրինագծի և նախահաշվի մասին և Բ. Ֆինանսական մինիստրության ընդհանուր նախահաշվի մասին:

Խորհրդարանը շտապողական կերպով և գ ընթերցումով ընդունելով օրինագիծը և հաստատելով նախահաշիվը, հանձնում է խմբագրական հանձնաժողովին:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է արտաքին գործոց մինիստրության և Մինիստրների խորհրդի նախահաշիվների մասին, որ և գ ընթերցումով խորհրդարանն ընդունում և հանձնում է խմբագրական հանձնաժողովին:

Մինիստր-նախագահ - Հայտարարեց Թիֆլիսում տեղի ունեցած անգլիական զորքերի հրամանատար Միլի, Ֆրանսիայի ներկայացուցիչ Շարդինիեի, Վրաստանի կառավարության նախ. Ժորդանիայի և Հայաստանի դիվան[ագիտական]

ներկայացուցիչ Ջամալյանի խորհրդակցության մասին, կարդաց երեքի ստորագրությունը կրող ռադիոհեռագիրը:

Քննության առնվեց[ին] հեռագրի մեջ հիշված կետերը, որից հետո Խորհրդարանը ընդունեց դաշնակցական ֆրակցիայի հետևյալ բանաձևը.

«Հայաստանի Խորհրդարանը, լսելով կառավարության նախագահի զեկուցումը հայ-վրացական կոնֆլիկտը լուծելու համար դաշնակիցների առաջարկած պայմանների մասին, ընդունում է երկու հարևան ժողովուրդների եղբայրասպան պատերազմին վերջ տալու առաջարկը:

Ապա գտնելով, որ ներկայացված պայմանները չեն համապատասխանում Հայաստանի իրավունքներին և արդար պահանջներին, հրահանգում է կառավարությանը՝ բանակցության միջոցով ջանալ փոփոխել այդ պայմանները համաձայն խորհրդարանի նախորդ որոշումների»:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 2-ին:

«Ձանգ», 15 հունվարի 1919թ.